դաքավարութեան : — Վիպասանութիւն Ամերիկոյ : 1787 Սաղմոս : — Գիրք ձեռնադրութեանց: — Համարողական արուեստ : — Պարտեզ հոգեւոր : — Ամենասուրբ Թոզարին : 1788 Բովանդակութիւն Ս. Թովմայի : — Հայնակ և Նեմեցնակ այրուբեն : — Քրիստոնեական : — Պատմութիւն ճենկիզխանի : 1790 Մաշտոց : 1791 Բարոյական աժ.արանութիւն : 1796 Ս. Կղեմեսի 9 կիւնկիք մտածական տուա : 1798 Տ. Կոմիտաս քահանանին վարքը վէ նահատակութիւնը : 1799 Վարք Լուսիա Կուսին : 1800 Ազիզ բարիխլեր : — Քրիսքիանին գրչավուզը : — 1802 Գիրք Սողոմոնի : 1803 Խորհրդատետր : 1805 Թովմաս Դեմբացի : 1806 Օն իքի բան : 1809 Յովսեփ Գեղեցիկ :

** Մեյքոնեանի մահեն (4 Հոկտ. 1799) գրեթէ 4 տարի վերջ, այս անջատուած Մխիթարեանք կ'ընտրեին արբանայր Զուդայեցի Հ. Ա.ժ.ատուր Բարիկեանը որ այն ատեն 65 տարու՝ երիցագոյն անդամն էր նոյն Միաբանութեան, և ամբողջ Ուխտը կը կոչուի «Տրիեստեան Մխիթարեան» : 1810ի քաղաքական փոփոխութիւններ կը դժուարացուցնեն իրենց կացութիւնը : Այդ բուշով ժամանակամիջոցին՝ Միաբանութիւնը՝ — նոյն իսկ կարօտ աւուր հացի — քայքայման վիճակի մը հասած էր : Բարիկեան կ'ստիպուի Վիեննա անցնիլ, մինչ անդին՝ իրենց անշարժ կալուածները կը գրաւուին. հազիւ կարելի կ'ըլլայ շարժական գոյքերէ մաս մը Վիեննա փոխադրել : Այն ատեն, աննկուն Աբրահայրը կայսեր կը մատուցանէ աղերսագիր մը որով կը յայտնէր թէ իրենք չեին ուզեր բեռ. ըլլալ կառավարութեան վրայ ու կրնային նոն իրենց գոյութիւնը պահպանել՝ տպարան մը և Արեւելքի մէջ դպրոցներ բանալով : 1811 Փետրվարին իրենց կը յանձնուին լքուած վանք մը և եկեղեցի մը որոնք Բարուչինեան կրօնաւորներունն էին: — «Տրիեստեանք» այլ ևս **Վիեննական** յորջորջուած՝ կ'սկսին ճրլատորիկ վերատին, դատիլ ու ծաղկիլ՝ ժողովրդեան համակիր վերաբերումով : Այդ օրէն մինչեւ հիմայ «Վիեննական Ուխտ»ի բոլորած արդիւնաւոր գործունեութիւնները — մանաւանդ ուսումնական տեսակետով — անուրանալի են. և Հայութիւնն ի շարս իր ձեմարաններուն ու դպրեվանուց՝ այսօր 2 կեդրոնավա՛նք ալ ունի անխափիր, Վենետիկն ու Վիեննան, — իմացական լուսաւորութեան այդ մշտապայծառ վառարանները :

** Երկար պիտի ըլլար մանրամասնել տեւականօրէն օգտաշատ այն գործունեութիւնը զոր ունեցան Վիեննականք յընթացս մեկ դարու : Յիշենք միայն իրարու յաջորդող Աբրահայրերը. — **Բարիկեանի** վախճանումեն վերջ (18 Ապրիլ 1825) կ'ունենանք Պօղոսեցին **Արիստակէս Ագարեան**. որուն մահուամբ (5 Մայիս 1855) Գաղատիացին **Յակոբոս Պօղոսեան**. որուն մահուամբ (1 Հոկտ. 1883) Սամօշուլվառցին **Վարդան Ըսկարեան**, որուն մահուամբ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒԹԻՒՆ
Ա.ՄԷՐԻԿՈՅ.
Բարեալ 'ի վարդապետէն Կուլիելմայ
Ոսպերթասնէ :
Ի
Բանալեալ յոլին ջաղրանիս :
Թարգմանեալ նախ յանգլիական բնագրէ յիտալական լեզու. և անտի 'ի Հայր Արնաս Վարդէպ Վասպարեանց Բրդվինցւոյ 'ի Աիրանութիւն բազմավաստակ բարեփչտակ Ամիթարայ Բարունապետի և Մեծի Բարոյի.
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ.
Յոր յաւելաւ 'ի վերջոյ համառօտ բացատրութիւն երթին բառից. որք հանդիպին յայսոսիկ երկուս հատորս :
Տպագրեալ ծախսիւ և ազգասիրութեամբ Ռոբերտոյ Պարտ Յովհաննէսի Ջուզայեցւոյ.
Յամի տն 1786. և 'ի թուականն Հայոց ռմզէ.
Ի ԹԻՐԱՆԱՏ
Ի Տպարանէ Հարց Ամիթարեանց.
Հրամանաւ Սենատոյ.

Թրիէսթէ տպուած այս գիրքին ծաղկեպսակը կը պարունակէ զարդախաչ մը՝ իր քառաթեւին շուրջ գեղեցուած Ռ. Կ. Վ. Ա. տառերով (= **Ռոդեգիր Կուսի, Վարդապետ Ապաստարանի**). — Մխիթարայ հիմնած Ուխտին նշանաբանը:

իմացական լուսաւորութեան այդ մշտապայծառ վառարանները :